

վրայ: «Մեծն Տիգրանի զրաժներուն վը-
րայ ութանկին արեգակը՝ թագին ամենէն
փառաւոր տեղը զետեղուած է, իր պա-
պուն և իր յաղթութեամբը սեփականա-
ցուցուած Պարթեւեան արծիւներուն մէջ-
տեղը, որոնց կտուցներն դէպ ի արեգ
դարձած ԸԼԼԱԼԸ նշանակ է արեգակին

դեցութիւնը Հայաստան (Ուրարտու) եկաւ
Քրիստոսէ Ե-Ձ դար առաջ, և միայն տի-
րապետող տարր մը, որ բնիկ տարրէն
շատ աւելի փոքրաթիւ էր, կը կազմէր
այդ Արիական տարրը, որով Վիշապը կը
շարունակէր ներկայացնել բնիկ նշան մը,
պահուած հասարակ ժողովրդեան մէջ:



Լուսամբնադարձ Նրուսաղէմի Մ. Յակոբի վամբիմ թիւ 1949 ձեռագրիմ
որ կը ներկայացնէ զարմանալի կազմաւորութեամբ վիշապ մը (դիւէն դատելով) անշուշտ զծաղրելի
մը երեւակայութեան մէկ ցանկութեան ստեղծագործութիւնը:

գերազանցութեանը: Մեծն Տիգրան իր
թագին վրայ ունեցած է նաեւ միմիայն
արեգակի քանդակուած զրամ»¹: Այսպէս
ինչ որ կարելի է Արեւին և Արծիւին մէջ,
նոյնը կարելի էր Վիշապին և Արծիւին
մէջ: Արեւը Արիական էր, իսկ Վիշապը
գուցէ աւելի հին Արեւէն և Ուրարտա-
կան: Նախապէս ըսի որ Արիական ազ-

Արեւին չափ Վիշապն ալ թշնամի էր ար-
ծիւին, և անոր դէմ պայքար մղեց, և ահա
այդ է եղած պատճառը որ Պերլինի թան-
գարանին գորգին նման օրինակներու մէջ
Արծիւը և Վիշապը իրարու դէմ պայքա-
րելու զբաղած ցոյց տրուած է, թէեւ ար-

1. Թէոդիկ, 1923. էջ 184: